

ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի 2024-2025 ուս. տարվա
գիտական խորհրդի առցանց հարցման նիստի

ք.Երևան

4 սեպտեմբերի 2024թ.

Ներկա էին՝ գիտխորհրդի 20 անդամներից 15-ը

Նախագահ՝ ք.գ.թ., դոցենտ Ա. Մկրտչյան

Գիտական քարտուղար՝ ք.գ.թ., դոցենտ Ա. Դադայան

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

- ՀՀ ԿԳՄՄՆ բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի կողմից հայտարարված «Երիտասարդ գիտաշխատողների հետազոտությունների աջակցության ծրագիր 2025» մրցույթին մասնակցելու և ֆինանսավորում ստանալու համար Ֆարմացիայի ինստիտուտի «Դեղերի որակի հսկման և մոնիտորինգի գիտաուսումնական կենտրոնի» փորձագետ, ք.գ.թ. Լուսինե Հայրապետյանի կողմից ներկայացված հայտի երաշխավորման հարցը:
- ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի առկա ասպիրանտ Էմմա Առաքելի Խաչատրյանի՝ որպես Ֆարմաբիոտիկայի և ֆարմակոգոգիայի ամբիոնի պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Ա. Սադյանի պրոֆեսորի օգնական հավակնորդի երաշխավորման հարցը: (Համաձայն ԵՊՀ №164/19-Լ հրամանի)
- Ընթացիկ հարցեր:

ՔՆՆԱՐԿԵՑԻՆ ԵՎ ՈՐՈՇԵՑԻՆ՝

- ՀՀ ԿԳՄՄՆ բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի կողմից հայտարարված «Երիտասարդ գիտաշխատողների հետազոտությունների

աջակցության ծրագիր 2025» մրցույթին մասնակցելու և ֆինանսավորում ստանալու համար Ֆարմացիայի ինստիտուտի «Դեղերի որակի հսկման և մոնիտորինգի գիտաուսումնական կենտրոնի» փորձագետ, ք.գ.թ. Լուսինե Հայրապետյանի կողմից ներկայացված հայտի երաշխավորման հարցը:

Լսեցին՝ ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի գիտական քարտուղար Անի Դադայանին, ով հաղորդեց, որ «Դեղերի որակի հսկման և մոնիտորինգի գիտաուսումնական կենտրոնի» փորձագետ, ք.գ.թ. Լուսինե Հայրապետյանի կողմից ներկայացվել է հայտ ՀՀ ԿԳՄՄՆ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի «Երիտասարդ գիտաշխատողների հետազոտությունների աջակցության ծրագիր 2025» մրցույթին մասնակցելու և ֆինանսավորում ստանալու համար:

Ելույթ ունեցավ՝ Լուսինե Հայրապետյանը, ով ներկայացրեց «Ամինոպոլիսախարիդի (խիտոզան) հիման վրա քիրալային կոմպոզիտային սորբենտներ» վերնագրով հայտը և դրա շրջանակներում կատարվելիք գիտահետազոտական աշխատանքները: Նա նշեց, որ քիրալային նյութերի բաժանումը ժամանակակից քրոմատոգրաֆիայի հիմնական մարտահրավերներից մեկն է: Դրանց արդյունավետ բաժանման համար անհրաժեշտ են հատուկ սորբենտներով քրոմատոգրաֆիկ աշտարակներ: Քիրալային սորբենտների նոր տեսակների մշակումը շարունակում է լինել կարևոր, քանի որ օպտիկապես ակտիվ միացություններ պարունակող դեղագործական և գյուղատնտեսական քիմիկատների քանակի աճը պահանջում է դրանց օպտիկական մաքրության ճշգրիտ որոշում: Քիրալային ստացիոնար ֆազերում օգտագործվում են տարբեր տեսակի սելեկտորներ, որոնք կարող են լինել ցածրամոլեկուլային կամ բարձրամոլեկուլային պոլիմերային նյութեր, որոնք սինթեզվում են կամ ստացվում են բնական քիրալային նյութերի ձևափոխությամբ: Ներկայումս չկա ստացիոնար ֆազ, որը միաժամանակ ունենա բարձր էնանտիալեկտիվություն, քրոմատոգրաֆիական բարձր արդյունավետություն և լայն կիրառման շրջանակ: Ծրագրի շրջանակներում նախատեսվում է օգտագործել խիտոզան ամինոպոլիսախարիդը և նրա ածանցյալները որպես քիրալային սելեկտորներ: Կիրառվելու են նաև

բազմամիջուկ հակաբիոտիկներ որպես քիրալային սելեկտորներ: Խիտոզանի խաչաձև կարման հատկությունը կօգտագործվի քիրալային սելեկտորները ծակոտկեն կրիչի վրա կապելու համար, ստեղծելով չլուծվող խիտոզանային կառուցվածք, որտեղ կմնան նաև հակաբիոտիկների մոլեկուլները: Նախատեսվում է ստանալ նաև քիրալային ԲԱՀՔ աշտարակներ անօրգանական ծակոտկեն նյութերի հիման վրա: նախագծի կատարմանը մասնակցելու են երիտասարդ աշխատակիցներ Էլլա Մինասյանը և Անի Չախոյանը:

Որոշեցին՝ բաց քվեարկությամբ (միաձայն) երաշխավորել հայտի ֆինանսավորումը:

2. ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի առկա ասպիրանտ Էմմա Առաքելի Խաչատրյանի՝ որպես Ֆարմքիմիայի և ֆարմակագնոզիայի ամբիոնի պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Ա. Սադյանի պրոֆեսորի օգնական հավակնորդի երաշխավորման հարցը:

Լսեցին՝ Ֆարմացիայի ինստիտուտի տնօրեն Աննա Մկրտչյանին, ով ներկայացրեց ԵՊՀ պրոֆեսորադասախոսական կազմի օգնական ներգրավելու կարգը, գործառույթները և պահանջները: Ելույթ ունեցավ նաև գիտխորհրդի անդամ, Ֆարմքիմիայի և ֆարմակագնոզիայի ամբիոնի վարիչ Հ. Միմոնյանը, ով նշեց, որ պրոֆեսորի օգնական դառնալու համար դիմել է նույն ամբիոնի առկա ասպիրանտ Էմմա Առաքելի Խաչատրյանը:

Որոշեցին՝ (միաձայն) հավանություն տալ Էմմա Առաքելի Խաչատրյանի թեկնածությանը՝ որպես պրոֆեսոր Ա. Սադյանի օգնական ներգրավելու համար:

3. Ընթացիկ հարցեր:

Նիստում ընթացիկ հարցեր չեն քննարկվել:

Գիտական խորհրդի նախագահ՝

ք.գ.թ, դոցենտ

Ա. Մկրտչյան

Գիտական խորհրդի քարտուղար՝

ք.գ.թ., դոցենտ

Ա. Դադայան